



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> • 52<sup>а</sup>  
Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,  
armphilology@ysu.am, [www.yasu.am](http://www.yasu.am)

#### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 5

#### ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՄՈՐՀՐԴԻ՝

#### 2022 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

#### *Օրակարգում՝*

1. Հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
2. Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի պաշտոնի համար դիմած թեկնածուների գործերի քննարկում, ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 32-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Ա. Ավագյանը տեղեկացրեց նաև, որ ԵՊՀ-ում մագիստրոսական ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ ԵՊՀ ռեկտորի հրմանով դադարեցվել են գիտխորհրդի երկու մագիստրոս ուսանողների՝ Սամվել Եղիազարյանի և Հովհաննես Հովակիմյանի անդամակցությունները գիտխորհրդի աշխատանքներին: Ա. Ավագյանը ավելացրեց նաև, որ դեռևս նախորդ նիստում հայոց լեզվի ամբիոնը գիտխորհրդի անդամի փոփոխություն էր կատարել և Բ.Գ.Թ., դոց. Լեոնիդ Թեյլանի փոխարեն առաջադրել էր հայոց լեզվի ասիստենտ Լուիզա Մելքոնյանի թեկնածությունը, սակայն քանի որ այդ փոփոխության վերաբերյալ դեռևս առկա չէ ռեկտորի համապատասխան հրամանը, հետևաբար այս պահին գիտխորհրդի անդամների փաստացի թիվը 33 է, որից այսօրվա նիստին մասնակցում են 31-ը:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Բ.Գ.Թ., դոց. Ա. Սարգսյանին, ով ընթերցեց հեռակա ուսուցմամբ բակալավրիատի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Թ., դոց. Սաթենիկ Ավետիսյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2021-22 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 9 ուսանող: Մեկ ուսանող ստացել է 19 միավոր, երկու ուսանող՝ 15 միավոր, երկու

ուսանող՝ 14 միավոր, երկու ուսանող՝ 12 միավոր, մեկ ուսանող՝ 11 միավոր, մեկ ուսանող՝ 9 միավոր:

«Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 5 ուսանող: Երկու ուսանող ստացել է 17 միավոր, մեկ ուսանող՝ 13 միավոր, երկու ուսանող՝ 12 միավոր:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքներն ընդհանուր առմամբ բավարարում էին ներկայացվող պահանջները: Նրանցում հիմնականում պահպանված էին կառուցվածքային և տեխնիկական պահանջները:

Պաշտպանության ընթացքում ուսանողները ներկայացրին իրենց ավարտական աշխատանքներին վերաբերող լուսապատկերային ցուցադրություններ:

Պաշտպանության ներկայացված աշխատանքներում, ըստ գործող կարգով սահմանված պահանջի, նշված էին աշխատանքի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը: Վերջում ներկայացվում էր համապատասխան գրականությունը:

Պաշտպանությանը մասնակցած ուսանողներն ընդհանուր առմամբ ունեին անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ, կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին: Կային նաև մի քանի ոչ հաջող պատասխաններ, ուստի և ցածր գնահատականներ: Սակայն ուսանողների մասնագիտական գիտելիքներն ընդհանուր առմամբ համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Ներկայացված աշխատանքները վերաբերում էին տարբեր խնդիրների: Անուամենայնիվ, ներկայացված աշխատանքներում հաճախ վերլուծականությունը քիչ էր, դրանք ավելի շատ նկարագրական բնույթ ունեին: Դա նկատվում էր նաև աշխատանքները բանավոր ներկայացնելիս: Ցանկանում եմ այս հանգամանքին հրավիրել ավարտական աշխատանքներ դեկավարող դասախոսների ուշադրությունը:

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը վկայում էր, որ համապատասխան ամբիոններն իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Ամփոփելով կարելի է նշել, որ պաշտպանությունն անցավ պատշաճ մակարդակով: Պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի ղեկանի և դեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

**Այնուհետև դոց. Ա. Սարգսյանը ընթերցեց նաև** հեռակա ուսուցմամբ բակալավրիատի՝ մանկավարժի որակավորման ավարտական ամփոփիչ քննության հանձնաժողովի նախագահ բ.գ.թ., դոց. Սաթենիկ Ավետիսյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր. 2021-22 ուստարում հայ բանասիրության ֆակուլտետում հեռակա ուսուցմամբ բակալավրիատի՝ մանկավարժի որակավորման ավարտական ամփոփիչ քննություն է հանձնել 12 ուսանող:

20 միավոր գնահատվել է մեկ ուսանող, 18 միավոր՝ երկու ուսանող, 17 միավոր՝ մեկ ուսանող, 16 միավոր՝ մեկ ուսանող, 13 միավոր՝ երկու ուսանող, 9 միավոր՝ չորս ուսանող, 8 միավոր մեկ ուսանող:

Քննությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Յուրաքանչյուր հարցատոմսում ներառվել է երեք հարց. առաջին հարցը վերաբերում էր մանկավարժությանը, երկրորդը՝ հայոց լեզվի կամ հայ գրականության դասավանդման

մեթոդիկային, իսկ երրորդ հարցը գործնական բնույթի էր. պահանջվում էր ներկայացնել հայոց լեզվի կամ գրականության որևէ դասի վարում:

Ուսանողներն ընդհանուր առմամբ կարողանում էին պատշաճ կերպով ներկայացնել հարցատոմսերում ներառված հարցերի պատասխանները, պատասխանել հանձնաժողովի հարցերին: Երրորդ՝ գործնական բնույթով հարցին պատասխանելիս ուսանողների մեծ մասը պատասխաններին զուգահեռ ներկայացրեց նաև լուսապատկերային ցուցադրություն, որը խրախուսելի է:

Քննության ընթացքում եղանակավոր, համեմատաբար թույլ պատասխաններ: Սակայն կարելի է ասել, որ քննությանը մասնակցած ուսանողների մասնագիտական գիտելիքներն ընդհանուր առմամբ համապատասխանում էին ներկայացվող պահանջներին:

Ուսանողների պատրաստվածության ընդհանուր որակը վկայում է, որ ուսումնառության ընթացքում մանկավարժական կրթարժեքի դասընթացները հիմնականում արդյունավետ են եղել: Այնուամենայնիվ պետք է ասել, որ որոշ դեպքերում ուսանողներն ավելի ծավալուն ներկայացնում էին տեսական նյութը, քան դասավանդման մեթոդաբանական առանձնահատկությունները: Ցանկալի է, որ ուսուցման ընթացքում գործնական հմտությունների զարգացումն ավելի մեծ ուշադրության արժանանա:

Քննությունն ընդհանուր առմամբ հաջողությամբ անցկացվեց, տեխնիկական խնդիրներ չառաջացան, պահպանվեցին ընթացակարգային պահանջները:

**Օրակարգի 2-րդ հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ա. Ավագյանը նախ ներկայացրեց ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը, այնուհետև տեղեկացրեց, որ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել են 2 թեկնածուներ՝ բ. գ. դ., պրոֆեսոր Աննա Աբաջյանը և բ. գ. թ., դոց. Վարդան Պետրոսյանը: Ֆակուլտետը ստացել է երկու թեկնածուների գործերը, փաստաթղթերը ամբողջական են, ֆակուլտետի դեկանի ղեկավարությամբ տեղի է ունեցել նաև արդեն միացյալ ամբիոնի նիստ, որտեղ քվեարկվել են երկու թեկնածուները: Ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները, ինչպես նաև թեկնածուների գործերը ներկայացնելու համար խոսքը տրվեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանին: Պրոֆ. Ա. Աբաջյանը նշեց, որ ավելի նպատակահարմար կլինի, եթե մրցութային հանձնաժողովի կարծիքը ներկայացնի հանձնաժողովի անդամ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, քանի որ մրցութային հանձնաժողովի նախագահը ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմած թեկնածուներից մեկն է: Այնուհետև մրցութային հանձնաժողովի անդամ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը ընթերցեց մրցութային հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որում մասնավորապես նշված էր.

**ԼՄԵՑԻՆ.** - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմած թեկնածուների հարցը:

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանը:

Նշվեց, որ ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային մասնակցելու համար դիմել են բ. գ. դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյանը և բ. գ. թ. դոց. Վարդան Ջորիկի Պետրոսյանը:

Հունիսի 23-ին կայացած նիստում, որը վարել է ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ա. Ավագյանը, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի որոշմամբ տեղի է ունեցել բաց քվեարկություն, որին մասնակցած, ընտրելու իրավունք ունեցող 10 անդամներից/յոթը՝ հ. լ. պատմության, երեքը՝ ընդհանուր լեզվաբանության նախկին ամբիոններից/ ութը՝ կողմ են քվեարկել պրոֆ. Ա. Աբաջյանին և երաշխավորել մասնակցելու հայոց լեզվի պատմության և

ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին, իսկ երկուսը քվեարկել են դոց. Վ. Պետրոսյանի օգտին:

Նշվեց, որ հայ բանասիրության ֆակուլտետում տարվող աշխատանքներում զգալի է հայոց լեզվի պատմության ամբիոնի կատարած աշխատանքը: Աբաջյանի ջանքերով ամբիոնը կազմակերպել է հանրապետական գիտաժողովներ, երիտասարդ գիտականների դպրոց-նստաշրջաններ, բարբառագիտական արշավներ, գրաբարի օլիմպիադաներ, լույս են ընծայվել վաղուց սպասված դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Ամբիոնում այժմ իրականացվում է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից հովանավորվող արդեն երկրորդ գիտական թեման՝ «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» խորագրով:

2018-ից մինչ այժմ Ա. Աբաջյանը տպագրել է 1 բուհական ձեռնարկ, 1 մենագրություն՝ համահեղինակությամբ, 10 գիտական հոդված: Վերջին հինգ տարվա նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4,5: Ֆակուլտետի որակի ապահովման և մրցութային հանձնաժողովների նախագահն է:

Մայր բուհի 95-ամյակի առթիվ Ա. Աբաջյանը պարգևատրվել է արծաթե, 100-ամյակի առթիվ՝ ԵՊՀ ոսկե մեդալներով:

2018-ից մինչ այժմ Վ. Պետրոսյանը տպագրել է 20 գիտական հոդված: Վերջին հինգ տարվա նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4,66:

Մայր բուհի 95-ամյակի առթիվ Վ. Պետրոսյանը պարգևատրվել է ԵՊՀ արծաթե մեդալով:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**- Հաշվի առնելով վերոգրյալները՝ մրցութային հանձնաժողովը որոշեց Բ. գ. դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյանին և Բ. գ. թ., դոցենտ Վարդան Չորիկի Պետրոսյանին երաշխավորել մասնակցելու հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

**Այնուհետև, ըստ այբբենական հերթականության, ծրագրային ելույթների համար խոսքը տրվեց թեկնածուներին:**

Բ. գ. դ., պրոֆեսոր Աննա Աբաջյանը իր ելույթում մասնավորապես նշեց.

**Գիտխորհրդի մեծարգո՝ նախագահ, հարգարժան գործընկերներ, սիրելի՛ ուսանողներ,**

այսօր ինձ համար խիստ պարտավորեցնող է հանդես գալ ձեր առջև որպես մայր բուհի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության՝ նոր ձևավորված ամբիոնի վարիչի թեկնածու: Հայոց լեզվի պատմության ամբիոնը, որն իր մեծությամբ ֆակուլտետում երկրորդն էր ժամանակակից հայոց լեզվի ամբիոնից հետո, եղել է և միավորվելուց հետո էլ լինելու է բանասիրական ֆակուլտետի դեմքն ու կշիռը ներկայացնող հեղինակավոր ամբիոններից մեկը:

Ի՞նչ ենք արել մեր պաշտոնավարման հաշվետու ժամանակահատվածում:

Առաջնային պլանում, անշուշտ, եղել է գիտահետազոտական գործունեությունը: Կազմակերպել ենք հանրապետական մի շարք գիտաժողովներ /օրինակ՝ «Աբեղյանական ընթերցումներ», որը պարբերական դարձավ, «Արդի հայերենի հիմնախնդիրներ», Մ. Ասատրյանի 90-ամյակին նվիրված նստաշրջան, ամբիոնի կազմավորման 30-ամյա հոբելյանին նվիրված հանրապետական գիտաժողով, որը եզրափակվեց մեր ուսանողների նարեկացիական հոգեպարար աղոթք- ասմունքով:

Գիտաժողովների նյութերը խմբագրել և հրատարակել ենք առանձին ժողովածուներով: ԵՊՀ թանգարանին նվիրել ենք աբեղյանական նկարների ցուցահանդեսին ներկայացրած 3 տասնյակից ավել նկարները:

Պարբերական էր դարձել Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող երիտասարդ գիտնականների դպրոց անվանակարգով գիտաժողովների կազմակերպումը՝ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը»», որը միտված էր երիտասարդ հետազոտողներին հայտնաբերելուն, խրախուսելուն: Ցավոք, 2020թ. համավարակի պատճառով չկայացավ մեր հերթական նստաշրջանը, և կորցրինք նաև Գիտկոմի փոխանցած գումարը:

Ամբիոնում հաջողությամբ իրականացվում է Գիտության կոմիտեի թեմատիկ պայմանագրային ֆինանսավորման մրցույթում հաղթած մեր երկրորդ թեման՝ «Գրաբարը՝ որպես արդի հայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» /մոտ 17մլն դրամ արժողությամբ, 3 տարի ժամկետով/: Նախորդը վերաբերում էր գրաբարի դարձվածքների ձևաիմաստային և կառուցվածքային քննությանը, դրանց դրսևորումներին արևելահայերենում: Գիտության կոմիտեի նշված ֆինանսավորումներով էլ համակարգչային տեխնիկայով զինել ենք ամբիոնն ու կաբինետը:

Կուլեկտիվ աշխատանքի արդյունքում լույս են տեսել հայոց լեզվի պատմության, միջին հայերենի երկար սպասված դասագրքերը, գրաբարի դարձվածաբանությունը:

Պատասխանատվությամբ ու սիրով աշխատել ենք մեծ ջանքերի գնով, հատկապես Յու. Ավետիսյանի շնորհիվ բացված Լեզվի բարձրագույն խորհրդում, որը, ցավոք, լուծարվեց 2018-ին:

Ամբիոնի այցեքարտերից է «Լավագույն գրաբարագետ» օլիմպիադան, որը պարբերաբար կազմակերպվում է ոչ միայն բանասերների, այլև հումանիտար մյուս ֆակուլտետների ուսանողների համար:

Ակտիվորեն մասնակցել ենք ԵՊՀ դիմորդների համար անցկացվող ամենամյա օլիմպիադային՝ հայոց լեզու և հայ գրականություն առարկայից:

Ամբիոնի դասախոսները հաճախ կազմակերպել են այցեր տարբեր թանգարաններ, Մատենադարան, եկեղեցիներ, անցկացրել ենք բարբառագիտական արշավ-պրակտիկաներ Գյումրիում, Վանաձորում:

Թարմացրել ենք ուսումնական ծրագրերը, ներմուծել նոր դասընթացներ մագիստրատուրայում՝ «Աստվածաշնչի լեզվաճական քննություն», «Հայ ձեռագրատների ժառանգության ուսումնասիրություն», հաջորդ տարվանից՝ «Գրաբարյան տեքստերի քննություն և թարգմանություն», «Գրաբարը ոչ մասնագետների համար»:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի հետ մագիստրոսական նոր ծրագիր ենք կազմել թարգմանիչների համար, որը կյանքի կկոչվի մյուս ուսումնական տարվանից:

### **Ինչպիսի ծրագրեր, նպատակներ ունենք.**

- շարունակել այն բարի ավանդույթները, որոնք գալիս են մեր ուսուցչապետերից, առավել լայն թափ հաղորդել գիտահետազոտական աշխատանքներին, միահամուռ ուժերով ստեղծել ուսումնական նոր դասագրքեր, գործնական աշխատանքների ձեռնարկներ, կազմակերպել միջազգային և հանրապետական գիտաժողովներ:
- Մենք աշխատելու ենք, որ նոր միավորված ամբիոնում հավասարապես կարևորվեն և՛ հայոց լեզվի պատմությունը, և՛ ընդհանուր լեզվաբանությունը,

ընդհանուր լեզվաբանության արդի ձեռքբերումները փոխկապակցվեն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հիմնախնդիրների հետ, և հայոց լեզվի պատմությունը ուսումնասիրվի ու բնութագրվի ընդհանուր լեզվաբանության նորարարական ձեռքբերումներով:

- Միացյալ ամբիոնի առաջնային խնդիր ենք համարում դասական լեզուների՝ ինչպես գրաբարի, այնպես էլ լատիներենի և հին հունարենի դասավանդումը և ուսումնասիրությունը նոր մակարդակի հասցնելը, որի արդյունքում կձևավորվեն նոր դասընթացներ թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ուսումնական ծրագրերում, կտպագրվեն գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և դասագրքեր:
- Բարձրացնել մասնագիտական առարկաների դասավանդման ընդհանուր որակը, թարմացնել մագիստրատուրայի դասընթացները /պատմական ձևաբանություն, համակարգչային լեզվաբանություն/, հավելել նորերը, որոնք պահանջարկ կարող են ունենալ և հետաքրքրել նաև ոչ լեզվաբաններին /օրինակ թարգմանական գործ. միջին հայերեն-աշխարհաբար/ ,
- պարբերաբար անցկացնել դասալսումներ, հետևել աշխատանքային և ուսումնական կարգապահության բարձրացմանը և այլն:
- ակտիվորեն մասնակցել ուսանողության գիտական, մշակութային կյանքին, սերտորեն համագործակցել ֆակուլտետի ուսխորհրդի և ՈՒԳԸ-ի հետ, օժանդակել տարբեր հարցերում:
- Չափազանց կարևոր է նաև բարձրացնել ամբիոնի գիտական, հասարակական-քաղաքական դերը հայերենագիտության, հայագիտության բնագավառներում: Մեր գործընկերները պետք է ներգրավվեն նաև այս ոլորտում, հանդես գան մամուլում, եթերից:
- Բանասիրական ֆակուլտետը պատմության ֆակուլտետի հետ միասին համալսարանի հիմնադիր ֆակուլտետն է, այն կորիզը, որից շատ ֆակուլտետներ են սերվել: Սակայն տասնամյակների ընթացքում չափանիշները ինչ-ինչ չափով փոխվել են, և այժմ գաղտնիք չէ՝ մեր ֆակուլտետ հաճախ սովորելու են գալիս ոչ լավագույն դիմորդները, ուստիև չափազանց կարևոր է սերտ կապեր հաստատելը հանրապետության դպրոցների հետ, ակտիվ աշխատանք ծավալել հենց ուսումնական տարվա սկզբից՝ դրանով իսկ նպաստելով խելացի շրջանավարտներին դեպի մեր ֆակուլտետ կողմնորոշվելուն:

Ինչպես նաև անհատական աշխատանք տանել առանձին կուրսերի հետ, ուսումնառության սկզբից հայտնաբերել ներհուն, խոստումնալից երիտասարդներին, ուղղորդել նրանց՝ կրթությունը շարունակելու մագիստրատուրայում, ապա նաև ասպիրանտուրայում, ինչը և կնպաստի ֆակուլտետը որակյալ կադրերով համալրելուն:

Խոսքս ավարտելով՝ նշեմ, որ ընտրվելու դեպքում ես իմ կողմից խոստանում եմ շարունակել հայոց լեզվի պատմության ամբիոնում եղած լավագույն ավանդույթները, ապահովել հավասարակշռություն, ստեղծագործական խաղաղ, բարյացակամ մթնոլորտ, որը, անշուշտ, բխում է բոլորիս շահերից:

Նպաստելու ենք, որ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պատիվը է՛լ ավելի բարձրանա ոչ միայն ֆակուլտետում և մայր բուհում, այլև հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

**Բ. գ. թ. դրց. Վարդան Պետրոսյանը իր խոսքում մասնավորապես նշեց.**

Նախատեսում ենք ամբիոնային աշխատանքներում առաջնորդվել երկու հիմնական սկզբունքով: Դրանք են.

Ա) Կոլեկտիվ աշխատանքի հաջողության նախադրյալը համերաշխ աշխատանքային մթնոլորտի ապահովումն է տվյալ կոլեկտիվում: Վրացական ասացվածքն ասում է. «Ով չի փնտրում բարեկամներ, նա հենց ինքն է իր թշնամին»: Աշխատանքային տարակարծությունները բնական են, բայց չպետք է թույլ տալ, որ դրանք վերաճեն թշնամանքի: Առաջնորդվել արդարամտության սկզբունքով, նպաստել գործընկերների մասնագիտական (իմա՝ գիտական) ծրագրերի իրագործմանը:

Բ) Առաջադրել իրատեսական ծրագրեր: Սա չի նշանակում քողարկվել իրատեսության անվան տակ և չփորձել լուրջ ծրագրեր իրականացնել, այլ նշանակում է, նկատի ունենալով նախորդ տարիների փորձը և ամբիոնային ներուժը, ի սկզբանե չառաջադրել ուժերից վեր խնդիրներ, հետո դառնալ դրանց պատանդը:

Ըստ այդմ՝ մենք անհրաժեշտ ենք համարում հետևյալ ծրագրերի առաջադրումը, իհարկե, նաև հաշվի առնելով, որ, օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, գուցե և առաջիկա հինգ տարվա ընթացքում հնարավոր չլինի ծրագրի ամբողջական իրագործումը: Ըստ այդմ, նախատեսում ենք աշխատանքային հետևյալ ուղղությունները:-

1) Սկզբնավորել «Արդի լեզվաբանության և հայերենագիտության հիմնախնդիրներ» խորագրով հանրապետական ամենամյա գիտաժողով և այդ գիտաժողովի զեկուցումներն ամփոփող տարեգիրք: Գիտաժողովի աշխատանքներում ներգրավել ինչպես հանրապետական, այնպես էլ արտերկրի գիտական ներուժը: Այդ գիտաժողովներից մեկը հինգ տարվա պարբերականությամբ կազմակերպել միջազգային կարգավիճակով:

2) Ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոններում դասավանդել և տարբեր տարիների այդ ամբիոնները ղեկավարել են անվանի լեզվաբաններ, ինչպիսիք են ակադեմիկոսներ Գ. Ղափանցյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Է. Աթայանը, պրոֆեսորներ Հ. Բարսեղյանը, Մ. Ասատրյանը, Ռ. Իշխանյանը, Է. Ավետյանը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ: Նշված գիտնականների հորելյանական տարեդարձների հետ համընկնելու դեպքում գիտաժողովները նվիրել նրանց հիշատակին և գիտաժողովի զեկուցումների ցանկում անպայմանորեն ներառել նաև տվյալ գիտնականի վաստակը լուսաբանող զեկուցումներ: Այսպիսի մոտեցման որդեգրումը հնարավորություն կտա, մի կողմից, պահպանել գիտաժողովի ամենամյա պարբերականությունը, մյուս կողմից՝ խուսափել տարվա ընթացքում մի քանի գիտաժողով կազմակերպելու հարկադրանքից, որովհետև փորձը ցույց է տալիս, որ մեկ տարում 2-3 գիտաժողովի կազմակերպումը խոչընդոտում է դրանց արդյունավետությանը և նվազեցնում նրանց նկատմամբ հետաքրքրությունը:

3) Կարևոր խնդիրներից է բուհական նոր ձեռնարկների պատրաստումը: Մասնավորապես կա *ընդհանուր լեզվաբանության, համեմատական լեզվաբանության և հայերենի համեմատական բարբառագիտության* ձեռնարկներ ստեղծելու անհրաժեշտություն: Այս առումով առհասարակ կիրառվում է երկու կարգի պրակտիկա:-

Ա) Արդեն իսկ առկա ձեռնարկների հիման վրա կոլեկտիվ ջանքերով համեմատաբար կարճ ժամանակում ստեղծվում է նոր տարբերակ, որը, սակայն, միայն անունով է նոր,

որովհետև չի գրվում վերջին տասնամյակների գիտական մտքի նվաճումների հաշվառումով, այլ նոր շարադրանքով կրկնում է նախորդ աշխատանքների բովանդակությունը:

Բ) Գրվում է վերջին շրջանի գիտական ձեռքբերումների հաշվառումով, որը հնարավորություն է տալիս գոնե մի քանի տասնամյակ արդյունավետորեն բավարարել ուսանողության կարիքները: Մենք երկրորդ տարբերակի կողմնակիցն ենք: Մեր կարծիքով, այդ կարգի ձեռնարկ է, օրինակ, Է. Աղայանի «Լեզվաբանության հիմունքները», որի առանձին դրույթներ թեպետև վաղուց հնացած են, որովհետև կրում են խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ընդհանուր առմամբ ձեռնարկը շարունակում է արդյունավետորեն ծառայել ուսանողության կարիքներին: Ընդհանուր լեզվաբանության բնագավառում ասվածի օրինակները կան ռուս լեզվաբանության մեջ, ուր կողք-կողքի գործառում են և՛ խորհրդային տարիներին ստեղծված բուհական ձեռնարկները (Ա. Ռեֆորմատսկի, Օ. Շիրոկով, Ռ. Բուդաղով, Կոդուխով, Մասլով և ուրիշներ), և՛ գրվել ու գրվում են նորերը (Ա. Գիրուցկի, Տ. Վենդինա, Ա. Կամչատնով և Ն. Նիկոլինա և ուրիշներ):

4) Կարևոր խնդիր է նաև ամբիոնի գիտական ներուժի պահպանումը և զարգացումը: Չնայած բեռնվածության սահմանափակ և տարեցտարի ավելի նվազող հնարավորություններին, այնուամենայնիվ, հնարավոր ամեն ինչ պիտի անել ոչ միայն առկա դասախոսական կազմը պահպանելու, այլև նոր կադրեր պատրաստելու համար: Հասկանալի է, որ դասախոսական աշխատանքի հեռանկարի բացակայության պատճառով ասպիրանտուրա դիմելը գնալով կորցնում է գրավչությունը: Բայցևայնպես, ուսանողության, հատկապես մագիստրոսների շրջանում աշխատանքի ճիշտ կազմակերպումը հետաքրքրություն առաջացնում է, և գտնվում են գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցողներ: Այդ մասին է վկայում, օրինակ, այս տարի երկու հայցորդի ընդունելությունն *ընդհանուր լեզվաբանության* ամբիոն, որը, ինչպես գիտեք, վճարովի հիմունքներով է: Այսինքն՝ կան մարդիկ, որ պատրաստ են նաև վճարել ասպիրանտական կրթության համար:

5) Ամբիոնը պիտի սերտորեն համագործակցի ՈւԳԸ-ի հետ: Կարևորում ենք հատկապես մասնագիտական խորհրդատվությունը ՈւԳԸ-ի գիտաժողովներում զեկուցումներով հանդես գալու ցանկություն ունեցող ուսանողներին: ՈւԳԸ-ն, ըստ էության, դեպի մագիստրատուրա և ասպիրանտուրա հետաքրքրությունների ճանապարհ բացող հարթակ է:

6) Որքան էլ բանասիրությունը հիմնականում տեսական հետաքրքրությունների ոլորտ է, այդպիսին են հատկապես ընդհանուրլեզվաբանական գիտակարգերը, ինչու ոչ՝ նաև հայոց լեզվի պատմությունը, բայց և այնպես հանրային կյանքի պահանջները ժամանակ առ ժամանակ կարող են մեր բնագավառում նույնպես ոչ միայն դասընթացների ծրագրեր վերանայելու, այլև՝ մեկ դասընթացը մեկ ուրիշով փոխարինելու անհրաժեշտություն առաջացնել: Այդպիսի փոփոխությունները, սակայն, պիտի հիմնավորված լինեն, չկրեն ձևական բնույթ: Այսինքն՝ չլինեն փոփոխություն հանուն փոփոխության: Մի բան մեզ համար կասկածից վեր է. անթույլատրելի է հիմնարար գիտակարգերի, օրինակ՝ *ընդհանուր լեզվաբանության*, *համեմատական լեզվաբանության*, *հայոց լեզվի պատմության*, *գրաբարի* կամ *լատիներենի* դասավանդման հաշվին փոփոխություն կատարելը, ասենք՝ ուսումնական ծրագրերում դրանց փոխարեն ինչ-որ նոր լեզվաբանական միջգիտակարգ, օրինակ՝ *ճանաչողական* (распознающая) կամ *հակադրական* (контрастивная) լեզվաբանության դասընթաց մտցնելը, որովհետև այդպիսի միջգիտակարգերի ուսումնասիրությունը արժեք ունի միայն այն ժամանակ, եթե ուսանողը բավարար գիտելիքներ ունի հիմնարար գիտակարգերից:



**Այնուհետև, ըստ ընթացակարգի, սկսվեցին ելույթները:**

Դոցենտ Սուսաննա Գրիգորյանը անդրադարձավ հայոց լեզվի պատմության ամբիոնի ներքին կյանքին, միջանձնային հարաբերություններին, որոնք կայուն հիմքի վրա են եղել Ա. Աբաջյանի շնորհիվ: Նա փաստեց, որ ամբիոնը հավաքական ուժ է և միշտ պետք է արդարության ակզբունքները գործեն, ինչպես որ եղել է նախկին ամբիոնի վարիչի օրոք:

Դոցենտ Սարգիս Ավետյանը նշեց, որ երկու թեկնածուներն էլ արժանավոր մարդիկ են, բայց պետք է ընտրություն կատարել: Քմահաճ որոշում չէ. ինքն ազնվորեն հայտարարում է, որ սատարելու է Ա. Աբաջյանի թեկնածությանը՝ հաշվի առնելով գիտական աստիճանը, ակադեմիական, աշխատանքային որակներն ու մարդկային հատկանիշները, և ինչպես ամբիոնի նիստում, գիտխորհրդում ևս քվեարկելու է նրա օգտին: Ավետյանը նաև խոսեց հանգիստ և համերաշխ մթնոլորտի կարևորության մասին՝ փաստելով, որ մինչ ընտրությունը առկա են ոչ աշխատանքային հարաբերություններ նախկին ամբիոնի գործավարուհու հետ:

Դոցենտ Նարինե Դիրբարյանը նշեց, որ ինքը շարունակում է մնալ այն համոզմանը, որ երկու ամբիոններն էլ առանձին մասնագիտական ամբիոններ լինեն: Նոր ձևավորվող ամբիոնի համար համագործակցայնությունը պետք է առաջնային լինի և առանց մրցակցության: Նախկին ամբիոնի վարիչ Ա. Աբաջյանն իր գործունեության ընթացքում ամբիոնում ձևավորել է կառավարչական համապատասխան մթնոլորտ: Նա համամիտ է, որ դասագրքեր անպայման պետք է կազմվեն, իսկ ուսումնական գործընթացը առավել բնեռայնացած լինի: Ն. Դիրբարյանը ավելացրեց նաև, որ նախկին ամբիոնում միշտ եղել է առողջ մթնոլորտ և հույս հայտնեց, որ նոր ձևավորված ամբիոնում ևս կլինեն կառուցողական հարաբերություններ:

Դոցենտ Աշխեն Ջրբաշյանը հաջողություն մաղթեց երկու թեկնածուներին և նշեց, որ իսկապես բոլորը կանգնած են դժվար ընտրության առջև: Նա կոչ արեց բոլորին շատ ծանր չտանել այսօրվա քվեարկության արդյունքները, շարունակել միասնաբար աշխատել:

**Ելույթներից հետո, համաձայն ընթացակարգի, փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝**

1. Նարինե Դիրբարյան – նախագահ
2. Աշխեն Ջրբաշյան
3. Մարիամ Աբրահամյան

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ, դոց. Նարինե Դիրբարյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 33 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 31-ը:

Բաժանվել է 31 քվեաթերթիկ:

Քվեատուփում եղել է 31 քվեաթերթիկ:

Քվեարկությանն արդյունքներն են՝

Հ/Հ	Թեկնածուի ազգանուն, անուն, հայրանուն	ԿՈՂՄ
1.	Աբաջյան Աննա Հենրիկի	20
2.	Պետրոսյան Վարդան Ջորիկի	10

**Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ 1:**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ Բ. Գ. Պ., պրոֆեսոր Աննա Հենրիկի Աբաջյանին ընտրված համարել հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 2.

Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ հաստատելու ֆակուլտետի գիտխորհրդի քվեարկության արդյունքները և խնդրել ռեկտորին, գործող կարգի համաձայն, ընտրված թեկնածուի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

**Ընթացիկ հարցերում** քննարկվեցին.

**ա/ԼՄԵՑԻՆ**– Հայ նորագույն գրականության ամբիոնի միջնորդությունը՝ «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուի 4-րդ գիրքը հրատարակության երաշխավորելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Բ.Գ.Թ., դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ժողովածուն խմբագրել և հրատարակության է պատրաստել պրոֆ. Վ. Գաբրիելյանը: Այն ընդգրկում է 2022 թ. մայիսի 12-ին կայացած «Մաթևոսյանական ընթերցումներ» գիտական չորրորդ նասաշրջանի զեկուցումները, որոնք առավել ընդլայնվելու խորացվել են և ներկայացվում են իբրև գիտական հոդվածներ: Դրանց հեղինակները մեր առաջատար գրականագետներն են: Հոդվածները նվիրված են Հրանտ Մաթևոսյանի կյանքի և ստեղծագործության մի շարք կողմերի նորովի քննությանը: Սա «Մաթևոսյանական ընթերցումների» 4-րդ գիրքն է և նախորդ երեքի նման մեծապես կօգնի մասնագետներին, ուսանողությանը և ընթերցողներին՝ ավելի լավ հասկանալու մեծ գրողի ստեղծագործությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Միջնորդել ԵՊՀ հրատարակչական խորհրդին՝ հրատարակելու «Մաթևոսյանական ընթերցումների» 4-րդ գիրքը:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ՊՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**